



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2022 թվականի N 401

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԲԻՇԵՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 18 ՀԱՍՅԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՅՈՄ ԱՐԱՄԱՅԻՍԻ
ԶՈՀՐԱՆՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍԻ ԶՈՀՐԱՆՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Արամայիսի Չոհրանյանի (ծնված՝ 13.10.1979թ.) և Սուսաննա Սարգսի Չոհրանյանի (ծնված՝ 20.01.1949թ.) դիմումը, 23.03.1990թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 18.07.2022թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-70/22 Ի եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատկագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Կարբիշևի փողոց թիվ 18 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 371.84քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970-1993թթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Արտյոմ Արամայիսի Չոհրանյանի (2/3) և Սուսաննա Սարգսի Չոհրանյանի (1/3) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կարբիշևի փողոց թիվ 18 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 371.84քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Կարբիշևի փողոց թիվ 18 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Դ. Կարբիշևի փողոց, թիվ 18 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2022 թվականի N 402

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԿԱՌՄԻԼԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Ռադիկի Բարայանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1741033 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա թիվ 8 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 8 շենք, 56 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2022 թվականի N 403

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Տ.ՉՈՒԽԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ 7/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԿՐՏԻՉ ՄԱՄԻԿՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մկրտիչ Մամիկոնի Հակոբյանի 16.05.2022թ. թիվ 02/3828 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10082022-06-0053 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տ.Չոխաջյան փողոց 7/8 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 22.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 19.7քմ) մառանը 87430 (ութսունյոթ հազար չորս հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 24.5քմ մակերեսով հողամասը 108830 (հարյուր ութ հազար ութ հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մկրտիչ Մամիկոնի Հակոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Մկրտիչ Մամիկոնի Հակոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2022 թվականի N 404

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ
1089/851 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Վարդգեսի Սարգսյանի դիմումը և Ջենֆիրա Մաթևոսի Կասեմյանի 28.10.2004 թվականին տրված թիվ ԱԱ 005920 մահվան վկայականը և ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Շիրակի խճ. թիվ 30 շենքի թիվ 9 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 29-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 1089/851 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը.

1.Որոշման 1-ին կետի աղյուսակում «Կասեմյան Ջենֆիրա Մ.» բառերը փոխարինել «Կասեմյան Ջենֆիրա Մաթևոսի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 22
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2022 թվականի N 405

ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ
699/175 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պայծառ Արշալույսի Քոչարյանի դիմումը և Մեխակ Վոլոդյայի Խանումյանի 15.04.1975 թվականին տրված II-ԸՆ N 044720 ծննդյան վկայականը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 75ա շենքի թիվ 35 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի սեպտեմբերի 01-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 699/175 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը՝

1. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Խանումյան Մեխակ Վ.- 1978թ.» բառերը փոխարինել «Խանումյան Մեխակ Վոլոդյայի- 1975թ.» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2022 թվականի N 406

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՐՈՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զեմֆիրա Լևոնի Ղարազյոզյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26062014-06-0036 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 26.01.2022թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 309 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20220117-84-5643554), 26.01.2022թ. թիվ 308 սեփականության իրավունքի վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20220117-105-5643613), ՀՀ կադաստրի կոմիտեի 02.02.2022թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-02022022-06-0105 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Սարոյան փողոց թիվ 3/1 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վ. Սարոյան փողոց, 5 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2022 թվականի N 407

ԱՇՈՏ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԴԵՐՁՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում քննարկվել է Աշոտ Վլադիմիրի Դերձյանի լիազորված անձ՝ Մարիամ Սարգսի Սիմոնյանի 25.07.2022 թվականի թիվ 01/7924 վարչական բողոքը՝ ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 16-ի «Աշոտ Վլադիմիրի Դերձյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 106 որոշման դեմ:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19.05.2022 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Աշոտ Դերձյանը Վանաձոր քաղաքի Երևանյան խճ. թիվ 74 հասցեի հարավային հատվածում կառուցել է ինքնակամ երկաթբետոնե կարկաս:

2022 թվականի մայիսի 19-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2022 թվականի մայիսի 30-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Վարչական վարույթի լսումներին, պատշաճ ծանուցվել և ներկայացել է Աշոտ Վլադիմիրի Դերձյանը (հիմք՝ 26.05.2022թ., ADLEO103777074AM)՝ հայտնելով, որ չի առարկում և խնդրում է կառույցն օրինականացնել օրենքով սահմանված կարգով:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19.05.2022 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա՝ Վանաձոր համայնքի ղեկավարը 16 հունիսի 2022 թվականին ընդունել է «Աշոտ Վլադիմիրի Դերձյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 106 որոշումը:

25 հուլիսի 2022 թվականին Աշոտ Դերձյանի լիազորված անձ Մարիամ Սարգսյանը, չխախտելով Վանաձոր համայնքի ղեկավարին վարչական կարգով բողոքարկելու ժամկետները, բողոքարկել է Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունիսի 2022 թվականի «Աշոտ Վլադիմիրի Դերձյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 106 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Վանաձոր համայնքի ղեկավարի 16.06.2022 թվականի թիվ 106 որոշումն Աշոտ Դերձյանը ստացել է 25.06.2022 թվականին, հետևաբար այն ուժի մեջ է մտել 26.06.2022 թվականին, ուստի բողոքի բերման ժամկետը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

25 հուլիսի 2022 թվականի թիվ 01/7924 վարչական բողոքում նշվել է, որ Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 16.06.2022 թվականին «Աշոտ Վաղիմիրի Դերձյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 106 որոշումը, ենթակա է վերացման, համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին պարբերության, ըստ որի՝ «վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի», նույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ «եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կամ դիտարկումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ կամ դիտարկմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում»:

Աշոտ Դերձյանի լիազորված անձ՝ Մարիամ Սիմոնյանի 25 հուլիսի 2022 թվականի վարչական բողոքի հիման վրա՝ 27 հուլիսի 2022 թվականին Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: 2022 թվականի օգոստոսի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Աշոտ Դերձյանի լիազորված անձ Մարիամ Սիմոնյանը (հիմք՝ 29.07.2022թ., AL0104919387AM):

Մարիամ Սիմոնյանը հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվել են ստուգումներ (ըստ վստահորդի հայտնած տեղեկությունների՝ մարտ ամսին), որի մասին տեղեկացվել է Վանաձորի համայնքապետարանը: Հայտնել է նաև, որ նման պայմաններում ակտը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտմամբ, այն է՝ կայացվել է ժամկետի ավարտից որոշակի ժամանակ անց (16.06.2022թ.), հավելելով, որ նման դիրքորոշում են հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը և ՀՀ վարչական դատարանը՝ թիվ ՎԴ/0059/05/18, ՎԴ/10555/05/13, ՎԴ/5652/05/21, ՎԴ/6345/05/21 վարչական գործերով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կամ դիտարկումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ կամ դիտարկմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում Երևանյան խճ. թիվ 74 հասցեում կատարված վարչական իրավախախտումը վարչական մարմինը բացահայտել է համապատասխան ստուգումներ և դիտարկումներ կատարելուց հետո, որի մասին են փաստում Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19 մայիսի 2022 թվականին կազմված արձանագրությունն ու զեկուցագիրը:

Վարչական իրավախախտումը բացահայտելուց հետո վարչական մարմինը 30-օրյա ժամկետում՝ չխախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները, ընդունել է վարչական ակտ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Աշոտ Վլադիմիրի Դերձյանի լիազորված անձ՝ Մարիամ Սարգսի Սիմոնյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2022 թվականի N 408

ԼԵՎՈՆ ՍԵՅՐԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում քննարկվել է Լևոն Սեյրանի Գալստյանի լիազորված անձ՝ Լիլիթ Վարուժանի Սարգսյանի 25.07.2022 թվականի թիվ 01/7926 վարչական բողոքը՝ ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 16-ի «Լևոն Սեյրանի Գալստյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 104 որոշման դեմ:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19.05.2022 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Լևոն Գալստյանը Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 80 հասցեի հարակից անտառային տարածքում կատարել է փայտե հավաքովի կոնստրուկցիաներով տնակի ինքնակամ շինարարական աշխատանքներ:

2022 թվականի մայիսի 19-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ:

Վարչական վարույթի լուսմներին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Լևոն Սեյրանի Գալստյանը (հիմք՝ 27.05.2022թ., ALO103838235AM)՝ հայտնելով, որ չի առարկում, որ իր կողմից 2021 թվականի նոյեմբեր ամսին ինքնակամ իրականացված շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկվի և ցանկանում է օրենքով սահմանված կարգով օրինականացնել:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի 19.05.2022 թվականի արձանագրության և զեկուցագրի հիման վրա՝ Վանաձոր համայնքի ղեկավարը 16 հունիսի 2022 թվականին ընդունել է «Լևոն Սեյրանի Գալստյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 104 որոշումը:

25 հուլիսի 2022 թվականին Լևոն Գալստյանի լիազորված անձ Լիլիթ Սարգսյանը, չխախտելով Վանաձոր համայնքի ղեկավարին վարչական կարգով բողոքարկելու ժամկետները, բողոքարկել է Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունիսի 2022 թվականի «Լևոն Սեյրանի Գալստյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 104 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Վանաձոր համայնքի ղեկավարի 16.06.2022 թվականի թիվ 104 որոշումը Լևոն Գալստյանն ստացել է 20.06.2022 թվականին, հետևաբար այն ուժի մեջ է մտել 23.06.2022 թվականին, ուստի բողոքի բերման ժամկետը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

25 հուլիսի 2022 թվականի թիվ 01/7926 վարչական բողոքում նշվել է, որ Վանաձոր համայնքի ղեկավարի 16.06.2022 թվականի «Լևոն Սեյրանի Գալստյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 104 որոշումը, ենթակա է վերացման, համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին պարբերության, ըստ որի՝ «վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի», նույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ «եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կամ դիտարկումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ կամ դիտարկմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում»:

Լևոն Գալստյանի լիազորված անձ՝ Լիլիթ Սարգսյանի 25 հուլիսի 2022 թվականի վարչական բողոքի հիման վրա՝ 27 հուլիսի 2022 թվականին Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: 2022 թվականի օգոստոսի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Լևոն Գալստյանի լիազորված անձ Մարիամ Սիմոնյանը (հիմք՝ 29.07.2022թ., ALO104919943AM)՝ ներկայացնելով 27.07.2022թ. լիազորագիրը (սույն լիազորագրով լիազորված են և՛ Լիլիթ Սարգսյանը, և՛ Մարիամ Սիմոնյանը):

Մարիամ Սիմոնյանը հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվել են ստուգումներ, որի մասին Վանաձորի համայնքապետարանը տեղեկացվել է 14.04.2022թ.: Հայտնել է նաև, որ նման պայմաններում ակտը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտմամբ, ինչի դեպքում նման ակտը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ կայացվել է ժամկետի ավարտից 2 օր անց, հավելելով, որ նման դիրքորոշում են հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը և ՀՀ վարչական դատարանը՝ թիվ ՎԴ/0059/05/18, ՎԴ/10555/05/13, ՎԴ/5652/05/21, ՎԴ/6345/05/21 վարչական գործերով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կամ դիտարկումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ կամ դիտարկմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում Մյասնիկյան 80 հասցեում կատարված վարչական իրավախախտումը վարչական մարմինը բացահայտել է համապատասխան ստուգումներ և դիտարկումներ կատարելուց հետո, որի մասին են փաստում Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19 մայիսի 2022 թվականին կազմված արձանագրությունն ու զեկուցագիրը:

Վարչական իրավախախտումը բացահայտելուց հետո վարչական մարմինը 30-օրյա ժամկետում՝ չխախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները, ընդունել է վարչական ակտ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Լևոն Սեյրանի Գալստյանի լիազորված անձ՝ Լիլիթ Վարուժանի Սարգսյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2022 թվականի N 409

ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆԻ ՈՓՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում քննարկվել է Մանվել Մամիկոնի Ուփյանի լիազորված անձ՝ Մարիամ Սարգսի Սիմոնյանի 25.07.2022 թվականի թիվ 01/7925 վարչական բողոքը՝ ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 16-ի «Մանվել Մամիկոնի Ուփյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 105 որոշման դեմ:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19.05.2022 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Մանվել Ուփյանը Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի, թիվ 36 հասցեում իրականացրել է հասարակական սպասարկման օբյեկտի նախագծային չափերի խախտում՝ կատարելով հողատարածքի զավթում:

2022 թվականի մայիսի 19-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2022 թվականի մայիսի 27-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Մանվել Մամիկոնի Ուփյանը (հիմք՝ 25.05.2022թ. ստացված փոստային անդորրագիր՝ ADLEO103777048AM):

Վարչական վարույթի լուսմների ընթացքում Մանվել Ուփյանը հայտնել է, որ ցանկանում է կառույցն օրինականացնել օրենքով սահմանված կարգով:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19.05.2022 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա՝ 16 հունիսի 2022 թվականին ընդունվել է «Մանվել Մամիկոնի Ուփյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 105 որոշումը:

25 հուլիսի 2022 թվականին Մանվել Ուփյանի լիազորված անձ Մարիամ Սարգսի Սիմոնյանը, չխախտելով Վանաձոր համայնքի ղեկավարին վարչական կարգով բողոքարկելու ժամկետները, բողոքարկել է Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունիսի 2022 թվականի «Մանվել Մամիկոնի Ուփյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 105 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Վանաձոր համայնքի ղեկավարի 16.06.2022 թվականի թիվ 105 որոշումը Մանվել Ոփյանն ստացել է 23.06.2022 թվականին, հետևաբար այն ուժի մեջ է մտել 24.06.2022 թվականին, ուստի բողոքի բերման ժամկետը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

25 հուլիսի 2022 թվականի թիվ 01/7925 վարչական բողոքում նշվել է, որ Վանաձոր համայնքի ղեկավարի 16.06.2022 թվականի «Մանվել Մամիկոնի Ոփյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 105 որոշումը, ենթակա է վերացման, համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին պարբերության, ըստ որի՝ «վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի», նույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ «եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կամ դիտարկումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ կամ դիտարկմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում»:

Մանվել Ոփյանի լիազորված անձ՝ Մարիամ Սիմոնյանի 25 հուլիսի 2022 թվականի վարչական բողոքի հիման վրա՝ 27 հուլիսի 2022 թվականին Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: 2022 թվականի օգոստոսի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Մանվել Ոփյանի լիազորված անձ Մարիամ Սիմոնյանը (հիմք՝ 29.07.2022թ., ALO104919094AM):

Մարիամ Սիմոնյանը հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվել են ստուգումներ (ըստ վստահորդի հայտնած տեղեկությունների՝ մարտ ամսին), որից հետո ուղարկվել են Վանաձորի համայնքապետարան: Հայտնել է նաև, որ նման պայմաններում ակտը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտմամբ, այն է՝ կայացվել է ժամկետի ավարտից որոշակի ժամանակ անց (16.06.2022թ.), հավելելով, որ նման դիրքորոշում են հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը և ՀՀ վարչական դատարանը՝ թիվ ՎԴ/0059/05/18, ՎԴ/10555/05/13, ՎԴ/5652/05/21, ՎԴ/6345/05/21 վարչական գործերով:

Քաղաք Վանաձոր, Շիրակի խճուղի թիվ 36 հասցեում կառուցապատող Մանվել Ոփյանի կողմից կառուցվող հասարակական սպասարկման օբյեկտում կատարված ստուգման վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարին տեղեկացվել է 18.05.2022 թվականին:

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, ի պատասխան ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 18.05.2022թ. թիվ 4045 գրության, 19 մայիսի 2022 թվականի թիվ 01/3611 գրությամբ հայտնել է, որ ք. Վանաձոր Շիրակի խճուղի թիվ 36 հասցեում իրականացվող հասարակական սպասարկման օբյեկտի նախագծային չափերի խախտման, հողատարածքի զավթման փաստով կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն, հարուցվել է վարչական վարույթ:

Արդյունքում՝ Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 16.06.2022 թվականին ընդունվել է Մանվել Մամիկոնի Ոփյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 105 որոշումը:

Տվյալ պարագայում, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ վարչական մարմինը բաց չի թողել իրավախախտման համար նախատեսվող վարչական տույժ կիրառելու օրենքով սահմանված ժամկետները:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Մանվել Մամիկոնի Ուիյանի լիազորված անձ՝ Մարիամ Սարգսի Սիմոնյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2022 թվականի N 410

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահագն Վասիլի Մուրադյանի 19.07.2022 թվականի թիվ 7599 դիմումը, Վահագն Վասիլի Մուրադյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28082017-06-0037 վկայականը, 23. 08.2017թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 147 պայմանագիրը, 22 օգոստոսի 2017 թվականի Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի թիվ 893-Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պողոտա թիվ 11 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2027 թվականի օգոստոսի 1-ը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վահագն Վասիլի Մուրադյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 30.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 30.0քմ մակերեսով հողամասի համար վճարի չափը ամսական սահմանելով 5040 (հինգ հազար քառասուն) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2022 թվականի N 411

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂ. ԹԻՎ 90 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Տելեմակի Ղումաշյանի լիազորված անձ Սեդա Սամվելի Ղումաշյանի դիմումը, 21.03.2022թ. տրված (նոտարական ակտի կոդ: 775-20220321-79-5773398) թիվ 869 լիազորագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0322998 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-02082022-06-0090 որոշումը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով՝ **որոշում եմ.**

Հաստատել Վանաձոր քաղաքի Մաշտոցի փող. թիվ 90 հասցեում գտնվող բնակելի տան գրադեցրած 0,06720հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 23
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2022 թվականի N 412

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂ ԹԻՎ 99/48 Ա ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Ռոբերտի Ղումայանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1906742 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Զ. Անդրանիկի փող թիվ 99/48ա հասցեում գտնվող տաղավարին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Զորավար Անդրանիկի փողոց, 99/50 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 23
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2022 թվականի N 413

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ (ՆԱԽԿԻՆ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂ.) ՓՈՂՈՑ
ԹԻՎ 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ՕՆԻԿԻ ՄԻՐԱՔՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Օնիկի Միրաքյանի (ծնված՝ 03.09.1955թ.) լիազորված անձ Օնիկ Գագիկի Միրաքյանի դիմումը, 08.04.2021թ. տրված թիվ 1525 (նոտարական ակտի կոդ: 763-20210408-90-5034822) լիազորագիրը, 19.01.1983թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 09.09.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4603 (նոտարական ակտի կոդ: 763-20210422-84-5061777) և թիվ 4605 (նոտարական ակտի կոդ: 763-20210909-84-5374305) վկայագրերը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 08.04.2021թ. տրված թիվ 1525 (նոտարական ակտի կոդ: 763-20210408-90-5034822) «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 21.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-79/22 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի փող.) փողոց թիվ 7 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ և դրան կից 36.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1950-1994թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 436.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Գագիկ Օնիկի Միրաքյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի փող.) փողոց թիվ 7 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ մակերեսով հողամասին կից 36.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Գագիկ Օնիկի Միրաքյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի փող.) փողոց թիվ 7 հասցեի 436.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի փող.) փողոց թիվ 7 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Ֆիդայիների փողոց, 7 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 23
ք.Վանաձոր



